**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

---

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան 7 սեպտեմբերի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Ա/Ձ Արմիկ Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Ա/Ձ Արմիկ Հարությունյանի դիմումը (ներկայացուցիչ՝ Ա. Ծատինյան) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի օգոստոսի 25-ին, որով դիմողը խնդրել է.

*««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածին, 60-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածին, 79-րդ և 81-րդ հոդվածին հակասող և անվավեր»:*

**2.** Վկայակոչելով Սահմանադրության մի շարք դրույթներ, Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերով արտահայտված իրավական դիրքորոշումներ՝ դիմողը նշում է, որ «Սնանկության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի այնպիսի մեկնաբանությունը, որը տրվել է թիվ ՍՆԴ/1500/04/21 սնանկության գործով սնանկության դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից, չի համապատասխանում «Սնանկության մասին» օրենքի նպատակներին, քանի որ պարտատիրոջ միակողմանի կամահայտնությամբ բարեխիղճ պարտապանը զրկվում է իր բնականոն գործունեությունը շարունակելու, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու և կենսունակությունը վերականգնելու իրական հնարավորությունից, բացի դրանից, անհամաչափ կերպով սահմանափակում է վերջինիս սեփականության իրավունքը: Նման մեկնաբանության արդյունքում պարտապանը կարող է զրկվել ֆինանսական առողջացման հնարավորությունից, ինչը օրենսդրի կողմից սահմանված սնանկության նպատակները դարձնում է հռչակագրային և խախտում է իրավական որոշակիության սկզբունքը: Վերոգրյալը, ըստ դիմողի, հանգեցնում է նաև արդար դատաքննության իրավունքի խախտման:

Դիմողի պնդմամբ՝ տվյալ պարագայում պարտապանի իրավունքների սահմանափակումը որևէ կերպ պայմանավորված չէ պարտատիրոջ շահերի պաշտպանության իրավաչափ նպատակով, քանի որ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման դեպքում ևս պարտատերն ամբողջ ծավալով ստանում է պարտավորության գումարն ըստ ժամանակացույցի: Այսինքն՝ ըստ դիմողի՝ առանց որևէ իրավաչափ նպատակի սահմանափակվում են պարտապանի իրավունքները, ընդ որում, այն աստիճան, որ հակասում են «Սնանկության մասին» օրենքի նպատակներին:

Ըստ դիմողի՝ «Սնանկության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելիս պարտապանը պարտավոր է

ներկայացնել նաև գրավադրված առարկաներն օգտագործելու վերաբերյալ պարտատիրոջ համաձայնությունը: Նշված մեկնաբանությունը, ըստ դիմողի, հակասում է սեփականության իրավունքի վերաբերյալ Սահմանադրության իրավակարգավորումներին, քանի որ գրավի առարկայի սեփականատերը զրկվում է իր գույքը օգտագործելու հնարավորությունից, և նման հնարավորությունը անվերապահ կերպով կախվածության մեջ է դրվում պարտատերերի կամքից: Մասնավորապես, դիմողը նշել է. «Սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ գրավադրված գույքերը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Գոշի փողոց, 7 շենք, թիվ 1 հասցեի անշարժ գույքը և ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փողոց, 11 շենք. թիվ 80 հասցեի անշարժ գույքը հանդիսանում են պարտապան ԱՁ Արմիկ Հարությունյանի և իր ամուսին Արմեն Հարությունյանի սեփականությունը և սույն պարտավորահիրավական հարաբերությունների հետ կապված նրանք պարտատեր Ամերիաբանկ ՓԲԸ-ի հետ կնքել են թիվ 2060557 և թիվ 2060558 պայմանագրերը, որոնց համաձայն՝ գրավի առարկան պետք է գտնվի գրավատուների տիրապետության տակ: Քանի որ գրավադրված գույքերը հանդիսանում են պարտավորության ապահովման միջոց և դրա հետ կապված ԱՁ Արմիկ Հարությունյանը իր պարտավորությունը մարելու համար ներկայացրել է ֆինանսական առողջացման ծրագիր. տրամաբանությունը կայանում է նրանում, որ առողջացման ծրագիրը իրագործվելու է գրավադրված գույքերի օգտագործման արդյունքում, որը բխում է գույքի տեսակից, (...) հետևաբար առողջացման ծրագրի քննարկման արդյունքում անտեսվել է պարտապանների սեփականության իրավունքը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ առողջացման ծրագիրը թողնվել առանց քննության»:

Վերոգրյալի լույսի ներքո դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է Սահմանադրության 10-րդ, 11-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 79 և 81-րդ հոդվածներին:

**3.** Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածների

պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝** հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը, ըստ որի՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթ(ներ)ի ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր:

Սույն դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ պահանջները պահպանված չեն: Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) սնանկության մասին ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի այնպիսի մեկնաբանությունը, որը տրվել է սնանկության դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից չի համապատասխանում սնանկության մասին օրենքի նպատակներին, քանի որ պարտատիրոջ միակողմանի կամահայտնությամբ բարեխիղճ պարտապանը զրկվում է իր բնականոն գործունեությունը շարունակելու, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու և կենսունակությունը վերականգնելու իրական հնարավորությունից, բացի այդ անհամաչափ կերպով սահմանափակում է վերջինիս սեփականության իրավունքը»: Բացի դրանից, դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթին սույն սնանկության գործով տրված մեկնաբանությունը օրենսդրի կողմից սահմանված սնանկության նպատակները դարձնում է հռչակագրային և խախտում է իրավական որոշակիության

սկզբունքը, իսկ վերոգրյալի արդյունքում խախտվում է նաև պարտապանի արդար դատաքննության իրավունքը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ուղղված հիմնավորվածության պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու իր սահմանադրական իրավունք(ներ)ի ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող օրինադրույթ(ներ)ի ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառա-հետևանքային կապի վերաբերյալ բավարար հիմնավորումներ: Տվյալ դեպքում դիմողը նշել է, որ «Սնանկության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է Սահմանադրության 10-րդ, 11-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ և 81-րդ հոդվածներին, սակայն չի ներկայացրել բավարար հիմնավորումներ՝ ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման կամ հաստատման համար ապահովված պարտատիրոջ համաձայնության՝ որպես ֆինանսական առողջացման ծրագրին ուղղված պարտադիր պահանջի առկայությունը ի՞նչ պատճառահետևան-քային կապի մեջ է գտնվում անձի սեփականության իրավունքի, դատական պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտման հետ, որքանո՞վ է ֆինանսական առողջացման ծրագրին ուղղված վերոնշյալ պահանջը հակասում Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքին, Սահմանադրության 81-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս միջազգային իրավական պրակտիկան հաշվի առնելու պահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ուղղված հիմնավորվածության պահանջը սույն դիմումում պահպանված չէ, ուստի՝ սույն դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Ա/Ձ Արմիկ Հարությունյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Է. Շաթիրյան

Անդամներ՝ Ա. Խաչատրյան

Վ. Գրիգորյան

7 սեպտեմբերի 2022 թվականի
ՍԴԴԿՈ–48